

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԷՓ

ՄՈՒՇԵՂ ՏՕՆՈՅԵԱՆ
mushotonoyan0440@gmail.com

ՄՈՒՏՔ

1970ականների վերջին, Միացեալ Նահանգներում հիմնք դրուեց *Հիփ-հոփի* եւ *Ռէփի* ստեղծմանն ու զարգացմանը: Ռէփը իրար յաջորդող յանգատորոժ երկտողերի հերթականութիւն է, որը արտասանում է կշռութաւոր որոշ եղանակաւորումով: Իսկ թէ որտեղից են եկել Ռէփ եւ Հիփ-հոփ անուանումները՝ որեւէ յստակեցում չկայ¹:

Հիփ-հոփ անուան յառաջացումին մասին վարկածները բաականին շատ են, քանի որ այն, որպէս երաժշտական ժանր նաեւ պարային ուղղութեան անուանում է: Ընդունված է, որ Հիփ-հոփը պարզապէս ծայնարկութիւն է, որը նկարագրել է ժանրի կշռոյթը եւ տեմպը: Ըստ ոմանց այդ ծայնարկութիւնը առաջացել է զինտորականների համահունչ քայլքից եւ ոտնածայներից: Իսկ աֆրոամերիկեան բարբառում դեռ հնուց «hip» են կոչուել մարդու մարմնի շարժումակ մասերը. նոյն բարբառով «Hop» նշանակել է շարժում:

Ռէփը Հայաստանում նոր զարգացող մշակոյթ է: Այն անելի երիտասարդ է, քան երգարուեստի միա ժանրերը: Հիմնադրումից մինչեւ այսօր հայաստանեան ռէփի մասին հնչող կարծիքները հակասական են եւ քննադատական: Հայկական *ռէփի* մակարդակն ու որակական աճը հասկանալու եւ գնահատելու համար պէտք է իմանալ դրա ստեղծման ու զարգացման պատմութիւնը, զուգահեռել հայաստանեան եւ արտասահմանեան *ռէփերը*: Սոյն ուսումնասիրութիւնը նպատակ ունի լուսարձակի տակ առնել հայաստանեան *ռէփի* ծնունդն ու զարգացումը եւ հեռանկարները, քննարկել բառապաշարը, անդրադառնալ բարձարածայնուած խնդիրներին են.:

Հայկական *ռէփի* պատմութիւնը կարելի է բաժանել երեք փուլի՝ հիմնադրում, զարգացում եւ ներկայ:

Հիփ-հոփ մշակոյթը Հայաստանում առաջին անգամ արտայայտուել է «TOP 10 OF RABIZ» նախագծում: Այն նախածեռնել էր Արթուր Զանիբեկեանը: Նախագծի կայացման գլխաւոր դերակատարների կազմում էին Գրիշա Աղախանեանը, Վարդան Զադոյեանը, Հայկօն (Հայկ Յակոբեան) եւ այլք: Նախագիծը ներկայացնում էր *ռափս* երգերի վերամշակում եւ համատեղում ժամանակի *հիթ* դարձած արտասահմանեան երգերի հետ, որոնց մէջ կային *ռէփային* հատուածներ:

Այդուհանդերձ, որպէս առանձին ժանր՝ ռէփը Հայաստանում սկսել է ձեւատրուել երկուհազարականներին, այսինքն 30-40 տարի անելի ուշ, քան Ամերիկայում, որտեղ *ռէփ* մշակոյթն արդէն կայացած էր, իսկ նրա հիմքերը

¹ Կայ տեսակէտ, որ ռէփը անգլերէն «rap-rapping» բառն է, որ նշանակում է զարկել, բախել: Ուրիշներ այն դիտում են որպէս յապաւում (Rhythm and Poetry):

կային դեռեա 1960ականներին: Դա է պատճառը, որ *ռէփը* Հայաստանում համարում է երիտասարդ եւ նոր զարգացող ժանր: Սա է վկայում նաեւ այն փաստը, որ Հայաստանում *ռէփի* հիմնադիր արուեստագետներից շատերը մինչեւ օրս էլ ասպարէզում են, վարում են աշխուժ գործունէութիւն եւ շարունակում երգեր թողարկել:

ՌԷՓԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Հայկական առաջին *ռէփ* խումբը ստեղծուեց 2000ին: Խմբի անունն էր «Selected from...», հիմնադիրը Միքայէլ Աբրահամեանն էր՝ Միշօն: Սակայն խումբը երկար կենսագրութիւն չունեցաւ, շուտով դադարեցրեց գործունէութիւնը՝ այդպէս էլ թողարկելով ոչ մի ալբոմ:

2001ի աշնանը Միշօն եւ Հայկ Մարգարեանը՝ Հայկօս, հիմնադրեցին «Հայ տղերք» (ՀՏ) խումբը:



2003 Դեկտեմբերի 26ին թողարկուեց առաջին հայկական *ռէփը*՝ «Հայ տղեն տղա ա» վերնագրով: Նրանց այս առաջին ռէփից ետք, 2004ին նրանք հրապարակեցին իրենց առաջին ալբոմը, որը կոչում է «Հայ տղերք»: Այն կազմուած էր 9 երգից: Ալբոմի մէկ ծայներիզն արժէր 500 դրամ:

2006ին թողարկում է «Հայ տղերք»ի երկրորդ ալբոմը՝ «Մի կաթիլ մեղր» անուանմամբ: Այն կազմուած էր 18 երգից: Ալբոմը յայտնի դարձաւ «Ընկերուի չունեմ», «Մենք ենք մեր մաշնեքը» «Ամառ ա» երգերով: «Հայ տղերք»ի երգերը երգիծական էին, յաճախ նաեւ ծաղրական, եւ այդ դիտանկիւնից էին ներկայացնում հայերի կեանքը: Ամէն ինչ հայերի ու հայկականութեան մասին էր: Նրանք կողմ էին պահպանողական գաղափարներին, պարսաւում էին ազատութիւն քարոզող, բայց իրականում դատարկ ու կեղծ գաղափարներն ու երեւոյթները թէ՛ անհատի արժէհամակարգում, թէ՛ հասարակութեան տարբեր շերտերում: Նրանց քննադատութիւններից չէին խուսափում նոյնիսկ շատ պետական կառոյցներ:

«Հայ տղեք»ի քննադատությունը ոճական տարբեր ձեւերով էր դրսևտրտում. արատատոր երեւոյթները նրանց երգերում կա՛մ ծաղրում էին, կա՛մ պարզապէս կոպիտ խօսքերով պարսաասանքի արժանանում: «Հայ տղեք»ի ոճին յատուկ էին ռէփ-պատմութիւնները (storytelling), քանի որ այդ ոճով ասելիքն ասելի պատկերատոր էր երեւում: Այդպիսի երգ էր «Մի կաթիլ մեղր»ը, որը ծիծաղաշարժ պատկերատրումներով նկարագրում էր մի կռուի պատմութիւն:


«Հայ տղեք»ը քարոզում էին արդարամտութիւն, ընկերասիրութիւն, բարոյականութիւն եւ այլ մարդկային արժէքներ, կարեւորում էին հոգեւորը եւ դատապարտում նիւթականը առաջնային համարող եւ յանուն դրա բարոյական օրէնքները շրջանցող մարդկանց: «Հայ տղեք»ի երգերը կենցաղային-խօսակցական ու շեղալեզու (Jargon) ոճով էին, ինչն էլ ռէփի հանդէպ եղած հակասական արձագանգների գլխատոր պատճառն էր: Սակայն երբ տուեալ ռէփն ունենում էր իմաստի ու ասելիքի գեղարուեստական կշիռ, մարդիկ հաանում էին այն: Շատ երգեր յաճախ թողարկում էին երկու ձեւով՝ հիմնական-ամբողջական եւ, ապա, հայիոյանքները հանած: Այսպիսով՝ «Հայ տղեք»ի ստեղծած արուեստը՝ հայկական ռէփը, թէեւ ոճական առումով զիջում էր սովորական բանաստեղծութեանն ու երգին, այդուհանդերձ, երիտասարդութեան մէջ գաղափարական քարոզչութեան միջոց էր:

Ռէփերի գործիքատրումները, հիմնականում ստեղծում էին յայտնի երգերից եւ երաժշտութիւններից ընտրուած հատուածներով, ինչպէս այսօր անում են շատ յայտնի ռէփ հեղինակներ: Օրինակ՝ նրանց ամենասիրուած ստեղծագործութիւններից մէկի՝ «Հարագատ քուչա» երգի գործիքատրումը ստեղծուել է հայ հոշակատոր յօրինող Առնօ Բաբաջանեանի «Մեղեդի» կոչուող երաժշտութիւնից առանձնացրած հատուածի հիման վրայ: Ըստ Միշոյի՝ իրենց համար ամենադժուար ու բարդ բանն այն էր, որ հայկական ասպարէզում առաջինն էին, եւ չկար նախորդող որեւէ խումբ, որը կարող էր օրինակ լինել իրենց համար:

2000ականներին ստեղծում են եւս միքանի ռէփ խմբեր, որոնցից յայտնի են «Երեւանսկի»ն եւ Նարեկ Պետրոսեանի հիմնադրած «Հայք»ը:

«Երեւանսկի»ն իր գործունէութիւնը ծաաւում էր ԱՄՆում: Իսմբի անդամները ներկայացնում էին օտարութեան մէջ ապրող հայերի կեանքը, յաճախ նաեւ հոգեվիճակը, կարօտը, եւ յիշում ու յիշեցնում էին այն ամէնը, ինչը նրանց կապում էր հայրենիքին՝ Հայաստանին: «Երեւանսկի»ի ոճը նոյնպէս ուղղակի տրամադրութիւն ապահովող ու խաղարկային երգերն էին:

«Երեւանսկի»ն ու «Հայք»ը նոյնպէս ալբոմներով հանդէս եկան: «Հայք»ը 2006ին թողարկեց «Չեմ տեսել, չեմ լսել, ի՞նչ ասեմ» ալբոմը: 2007ին «Երեւանսկի»ն թողարկեց «Մի անգամ Ամերիկայում» ալբոմը: 2006ին «Հայք»ի կատարմամբ հրապարակուեց «Քամի՛, փչի՛» երգը, որը համարում է հիթ դարձած առաջին հայկական հիփ-հոփ երգը:



«Քամի փչի» երգի գլխատր նկարը

Այն «Չեմ տեսել, չեմ լսել, ի՞նչ ասեմ» ալբոմի երգերից մէկն էր եւ հասել է լուրջ յաջողութիւնների՝ գրանցելով ամենաշատ դիտումները, եւ այսօր էլ անպակաս է երիտասարդների հաւաքոյթներից: «Երեւանսկի»ն նոյնպէս ետ չմնաց հիթ ունենալու գործում եւ թողարկելով «Անիծուած սէր», «Երեւանն իմ սրտում» երգերը՝ նոյնպէս ընդլայնեց իր լսարանը: Այս խմբերը եւս ունէին հայկական ընդգծուած դիմագիծ եւ մտածելակերպ:

2007ին Միշտ թողարկեց իր «Եկա տեսա...ի» ալբոմը, որի ամենայայտնի երգը «Քո համար»ն է: Այն ըստ ժամանակակիցների՝ առաջին երգն էր, որ կարելի էր լսել փողոցում բազմաթիւ մեքենաների լայնօրէն բաց պատուհաններից:

2008ին թողարկուեց է ՀՏ Հայկոյի սոլօ ալբոմը՝ «Անցած էտապ»ը: Այն դարձաւ ժամանակի ռէփի երկրպագու երիտասարդութեան ամենասիրուած ալբոմներից մէկը եւ ճանաչուեց տարուայ լաւագոյն ալբոմ: Ալբոմի յայտնի երգերն էին՝ «Քոչարի», «Անցած էտապ», «Քո ցալը տանեմ»:

2000ականները, փաստորէն, դարձան հայկական ռէփի հիմնադրման տարիները: Ստեղծուած խմբերը հասցրեցին սիրուել եւ ընդունուել հասարակութեան կողմից:

Այսպիսով՝ հայկական ռէփի հիմնադրման պատմութիւնը ցոյց է տալիս, որ այն ստեղծուել է հասարակ հայ տղաների կողմից, ովքեր սիրում էին իրենց ժողովրդին, իրենց հայրենիքը, եւ նրանց մտահոգութիւնը իրենց հասարակութեան բարքերն էին: Նրանք անում էին ամէն ինչ, որպէսզի երիտասարդների օրը լինի կեանքով լեցուն: Ինչպէս ասում է ռէփի հիմնադիր Միշօն, ռէփը հրաշալի գէնք է երիտասարդութեանը ճիշտ եւ օգտակար գաղափարներ քարոզելու համար, եւ եկել է մի սերունդ, որի փամփուշտը տառն է:

Հայկական ռէփի սկզբնաւորման շրջանը նման է արտասահմանեան, յատկապէս ամերիկեան ռէփի սկզբնաւորման ժամանակաշրջանին, քանի որ այս շրջանի երգերն ունէին ասելիք, հետաքրքրութիւն, քննադատականութիւն, բարոյական ու մարդկային արժէքների քարոզ:

ԶԱՐԳԱՅՈՒՄ

2008ին «Հայ տղեք» խումբը լուծարում է, ու սկսում է Միշօ - ՀՏ Հայկօ մրցակցութիւնը:

2009ին ՀՏ Հայկօն հրապարակում է «Քուանշ» ալբոմը, որտեղ բոլոր երեսոյթների հետ կողին թիրախատում է նաեւ իր նախկին խմբակիցներին: Ալբոմը տարբերում-առանձնանում էր խիստ քննադատական բնոյթով: Քննադատութիւնները վերաբերում էին նոյնիսկ քաղաքական ոլորտին, քաղաքական ուժերին, պետական եւ մասնաւոր շատ կառոյցներին՝ բանկերին եւ հիւանդանոցներին, կրթական հաստատութիւններին, որոնք անգրագէտ մարդկանց դիպլոմ էին տալիս:

Քուանշ, ես չեմ հաստում բանկերին, բանկը քո նեռվերն ա խմում տոկոսով ամէն ամիս, դու էտ իսկի չես նկատում, դու գիտես փող ես դուրս տալիս, բայց իրականում դու սաղ կեանք մնում ես իրանց գերի, գերին ես սիստեմի, գերի մեր կառավարութեանը ու բոլոր պետական հիմնարկներին...

Իմ առողջաան վիճակը իմ համար թանկ ա, բայց բանից պարզում ա հիւանդանոցն աւելի թանկ ա, ես վախում եմ գնամ բժիշկների մօտ, որտեւ կարող ա հանդիպի ինձ փողո դասաւորուած մի հատ ***, որ ամէն պահի կարող ա մարդ սպանի, իրա անգիտութեամբ, իրա տգիտութեամբ... Ո՛վ ես դու, ո՛վ ա քեզ դիպլոմ տուլ...

Քաղաքական իրադարձութիւնները պատրուակ ու առիթ են դառնում, որ ՀՏ Հայկօն 2012ին թողարկի «Անտիսիստէմ» երգը: Մէկ տարի յետոյ նա դադարեցնում է ռէփի ասպարէզում իր գործունէութիւնը:

Ալբոմային աւելի աշխուժ գործունէութիւն է ծաւալում Միշօն: Նա թողարկում է «Քաղաքը խօսում ա, լսէք...» (2009), «Զրօ» (2010), «Իմ լեզուն» (2011) ալբոմները:



Միշտ բարձրաձայնում էր իր երկրի ընկերային խնդիրները եւ արգելքները: Նրա աշխատանքն աչքի էր ընկնում ոչ միայն Հայաստանում հիփ-հոփը տարածելով, այլև ստեղծագործությունների քաղաքական, քնարական բովանդակությամբ:

2011ին «Հայք» խումբը վերածում է «Մեծ Հայք» հարթակի, որի հիմնադիր Նարեկ Մեծ Հայքը թողարկում է իր «Հայաֆիկացում» ալբոմը: Այն տարբերուող եւ հետաքրքիր է նրանով, որ երգերի գործիքատրումներում օգտագործուել են հայկական ազգային երգերից ու երաժշտություններից հատուածներ:

2010ականների սկիզբը յատկանշական է նրանով, որ ասպարէզում աշխուժացան միքանի ռէփերներ, որոնք լսարանի քանակով չէին զիջում միմեանց եւ կարողանում էին նաեւ համագործակցել: Նրանցից ամենաաշխուժներն էին Սենչօն, Ֆեկան, Էդգարը, Մոսը, Էմտիկօն:

Ալբոմային քաղաքականությունը աստիճանաբար փոխուեց առանձին երգերի ձայնագրման քաղաքականութեան: Թողարկուում էին երգեր, որոնք բաականին շատ դիտումներ էին հաաքում եւ լսում են մինչեւ այսօր: Այս ժամանակաշրջանում ռէփի մէջ տեղի ունեցաւ թեմատիկ փոփոխութիւն: Ռէփերները սկսեցին անելի շատ պատմել այն, ինչ իրենք ապրում են՝ իրենց օրը, կեանքը, աշխարհն իրենց աչքերով, սկսեցին շատանալ սիրային թեմայով ռէփերը: Համեմատած «Հայ տղերք»ի երգերի՝ այս երգերն անելի քիչ էին ընդհանրական, թեմատիկ առումով այդքան էլ ընդգրկուում չէին: Քչացան ընկերային բարքերին վերաբերող ռէփերը:

2010ականների սկզբին աշխուժացաւ դեռ 2008ին ստեղծուած «Ռեդ լայթ» խումբը, որի կազմում հանդէս էր գալիս Սենչօն, ով յայտնի է ռէփի

իր բերած նոր ոճով՝ underground: «Ռեդ լայթ»ը, որի թեմատիկայի մեջ գերակշռում է բակային կեանքի թեման, յաճախ նաեւ գործակցում էր «Մեծ Հայք» խմբի հետ:



Հայկական ռեփի ականատոր դեմքեր, վերը, ձախէն աջ՝ Սենչօ, Մոս, ԷմՏիկօ, Ֆեկա, Էտկար

2010ականների սկիզբը յատկանշական էր նաեւ Աշոտ Արսէնեանի՝ Ֆեկայի, ասպարէզ մտնելով: Նա յայտնի է իր արագ ընթերցանութեամբ, որի շնորհիւ ռեփերին յաճախ համեմատում են ամերիկեան հիփ-հոփ աստղ Էմէնէմի (Մարշալ Բրիա) հետ: Ֆեկայի գործունէութիւնը յիշեցնում էր «Հայ տղեք»ի երգերը, քանի որ նա էլ ուներ պահպանողական գաղափարներ եւ յաճախ կոպտօրէն կամ ծաղրանքով բարձրացնում էր այն խնդիրները, որոնք կապուած էին հասարակութեան բարքերի հետ. չէր ընդունում յետամնացութիւնը, ծաղրում էր յետամնաց բարքերը: Այդ երգերից են «Գեղցի տղա» եւ «Գեղցի աղջիկ» երգերը. դրանք ծաղրում էին անտաշ, անդաստիարակ եւ անկիրթ մարդկանց:

2012ին հիմնադրուեց «Մի քանի հոգի» խումբը, որի անդամներն են Ֆելիքս Իսաչատրեանը՝ Ֆելօն, Նարեկ Յովսէփեանը՝ Աչիլլան, Միշօն, Ռոլանդ Գասպարեանը եւ Սերժ Սիմոնեանը՝ Սերժօն: Այս խումբը իր մեծ դերն ունեցաւ հայկական ռեփի զարգացման մէջ, քանի որ առաջին հերթին միքանի առաջատար ռեփրոնների միութիւն էր, եւ բացի այդ՝ նրանք թողել են բաւականին հարուստ երգացանկ, որի գրեթէ բոլոր երգերը սիրուել են ունկնդրի կողմից:

2010ականների երկրորդ կէսից ասպարէզում սկսեցին հանդէս գալ Վնասը եւ Կարը, որոնք այս պահին Հայաստանի ամենայայտնի ու ժողովր-

դականություն ունեցող ռեփորմների շարքում են, Յովհաննէս Գաալեանի՝ Սիրիուսի, եւ «Մի քանի հոգի» խմբի արուեստագէտների հետ:

ՆԵՐԿԱՆ

Վնասը եւ Կարը սկսեցին հանդէս գալ երկուսով, որը կոչում է «Վնասակար»՝ վնաս-ակար: Դա առաջին զոյգն էր, որ միանգամից լայն տարածում գտաւ հայկական ռէփում, իսկ այն երգը, որը ճանաչում բերեց նրանց «Trap House»-ն էր:

«Վնասակար»ի մուտքը յեղափոխական դարձաւ հայկական ռէփի պատմութեան մէջ: Այն ե՛ւ դրական, ե՛ւ բացասական կերպով անդրադարձաւ ռէփի մասին եղած կարծիքների վրայ: Գրեթէ ամբողջովին փոխուեց ռէփի բնոյթը, ռէփ լսողների քանակը կտրուկ մեծացաւ, եւ եթէ մինչ այս թողարկուած երգերը տարիների ընթացքում էին անցնում մէկ միլիոն դիտումի շէմը, ապա այս շրջանի երգերը երկու-երեք շաբաթում գրաւում են միլիոն եւ անելի լսարան: Սակայն չենք կարող վստահաբար ասել, որ «Վնասակար»ի երգերն անելի լան են, քան մինչ այդ թողարկուած երգերը, որովհետեւ ռէփի այսքան տարածմանը մեծամասամբ նպաստում է այն, որ ռէփերը սկսել են յայտնուել ոչ միայն Եւրօպայում այլեւ ինստագրամում, Տիկտոկում եւ այլ նմանատիպ հարթակներում: Այսինքն՝ այս երգերը մեծ լսարան են ձեռք բերում՝ անելի շատ ոչ թէ իմաստային, գաղափարական, մատուցման, գործիքատրման, ընդհանրապէս որակի առումով անելի լաւը լինելով, այլ մեղեդու, *պիթի* եւ ընթերցման վարակիչ լինելով: Այսինքն՝ հիմա հիփ-հոփ հիթ ունենալու համար ոչ թէ պէտք է միայն գեղեցիկ ու իմաստալից երգ թողարկել, այլ նաեւ այն տալ որեւէ յայտնի տիկտոկլըրի, ով դրանով տիկտոկ կը նկարի՝ տարածելով երգը:

Սակայն բացի այն երգերից, որոնցում շեշտը դրուած է վարակիչ լինելու համար, «Վնասակար»ը որպէս զուգերգողներ եւ Վնասն ու Կարը, որպէս առանձին արուեստագէտներ ունեն ալբոմներ, որոնցում շատ երգեր են ճանաչուել ու սիրուել լսարանի կողմից: 2020ին Վնասը թողարկեց «Ergaran» ալբոմը, իսկ Կարը 2019-20ականներին՝ «Anporcank» ալբոմը:

Բացի այդ, այժմեան ռէփում կարող ենք նկատել, որ տեղծագործութեան իմաստը, գնում է այնտեղ, ուր տանում է յանգը, այսինքն՝ *տեմպ* եւ յանգ ստեղծելու համար ռեփորմները զոհում են տողերի իմաստը եւ դրանց իմաստային կապակցութիւնը, որի պատճառով ստեղծում է տպաւորութիւն, թէ տողերը միմեանց հետ իմաստային կապ չունեն, մինչդեռ հիմնադրման ժամանակաշրջանի երգերում յաճախ կարող ենք տեսնել, որ արուեստագէտը չի կատարել լաւ յանգաւորում, բայց պահպանել է ռէփի ասելիքը, իմաստը եւ տողերի միջեւ իմաստային փոխկապակցութիւնը:

2010ականների երկրորդ կէսին՝ փոխուեց ռէփի թեմատիկան: Հիմա անելի շատ խօսում է առօրեայի, կենցաղի, աղջիկների հետ սիրային ու ոչ-սիրային կապերի մասին, քան քարոզում են հոգեւոր ու մարդկային ար-

ժեքներ: Թերեա սա է պատճառը, որ շատերն այսօր նախընտրում են լսել հայկական ռեփի սկզբնաւորման կամ զարգացման շրջանի երգերը:

Ժամանակաշրջանների տարբերութիւնը տեսնելու համար բաական է համեմատել «Հայ տղեք»ի «19» երգը «Վնասակար»ի՝ յաջողութեան հասած երգերից մէկի հետ: «19»ը երգ է, որը պատմում է 19 տարեկան հասարակ հայ տղայի մասին: Երգի գաղափարն այն է, որ 19 տարեկան տղան պէտք է վայելի կեանքն առանց շտապելու, քանի որ այն նոր է սկսում, ու որքան էլ դժուարութիւններ լինեն, նա չպէտք է կոտրուի, եւ պէտք է կարողանայ տեսնել ու զգալ կեանքի գեղեցկութիւնները, սէրը: Երգում ասում է, որ այդ տարիքում պէտք չէ դժուարութիւնների պատճառով անընդհատ հարբել ու կործանել կեանքը: Սրան զուգահեռ ուսումնասիրելով «Վնասակար»ին՝ տեսնում ենք, որ յայտնի երգերից մէկում ասում է՝ *«Ես ուզում եմ մահանալ, քորի հնձ դռագ»*:

Այս շրջանի ռեփի հանդէպ ամենամեծ քննադատութիւնների պատճառը դարձաւ մարիխուանայի եւ այլ տեսակի թմրանիւթերի, խաղամոլութեան անհիմն քարոզը, որը կար նաեւ նախորդ շրջանի ռեփերում, սակայն ոչ այն աստիճան, որքան այս շրջանում: Հայկական ռեփը նմանուեց ամերիկեան *նիւսքու* ռեփին, այսինքն՝ գրեթէ լրիւ «որդեգրեց» մեծմասամբ կենցաղային թեմատիկայով ստեղծագործական ոճ, որը կարող էր վատ ազդեցութիւն ունենալ լսարանի վրայ, քանի որ արուեստը, մշակոյթը նաեւ կրթադաստիարակչական գործառոյթ ունեն, եւ մարդկային արժէքների մասին երգերով մեծացած մարդիկ ու թմրամոլութեան մասին երգերով մեծացած մարդիկ չեն կարող նոյն արժէքները կրել ու դաւանել:

Բայց պէտք է արդար գտնուել ու ասել, որ «Վնասակար»ի անդամները՝ Վնասը եւ Կարը, նոյնպէս ունեն երգեր, որոնք գեղեցիկ են, ունեն ասելիք ու իմաստ: Աղջիկների շրջանում անելի շատ տարածուած են նրանց սիրային երգերը, որոնցից յայտնի են Տարօն Իսպիրեանի՝ Պոնչի հետ համատեղ երգերը՝ «Զեմ կարում քնեմ»ը «Վազում եմ»ը «Իզաբէլ»ը են.: Բացի այդ, Վնասը իր յատկապէս նոր երգերում նաեւ թմրամոլութեանը դէմ գաղափարներ է ասում:

«Վնասակար»ի հակառակ բեւեռում Սիրիուսն է: Նրանք երբեք միասին որեւէ երգ չեն թողարկել, սակայն ունեն գրեթէ հաասար քանակի լսարան: Ունկնդիրներն այն կարծիքին էին, որ երկու հանրածանօթ արուեստագետները իրար հակառակորդներ են, բայց 2023ի աարտին նրանք անակնկալ մատուցեցին ռեփի սիրահարներին և ֆիթ² թողարկեցին:

Սիրիուսի երգերը նախկինում անելի շատ արժէքային էին եւ սիրային, իսկ հիմա՝ սիրային, առօրեական եւ կենցաղային: Սիրիուսի երգերում թմրամոլութեան ու խաղամոլութեան քարոզչութեան տարրեր եւ նկատ-

² Ֆիթը հիփ-հոփ ժանրում զուգերգն է:

տում են, սակայն դրանք անհամեմատ անելի քիչ են: «YKCB» խմբից դուրս գալով՝ Սիրիուսը ստեղծում է «Street Stars» հարթակը, որի շրջանակում գործակցում է այլ ռեփերների հետ:

Հիմնադրման ու զարգացման ժամանակաշրջանի եւ ներկայիս ռեփի միջեւ յանգակառուցման, բառօգտագործման, ոճային եւ, իվերջոյ, մակարդակային տարբերութիւնները եւ նմանութիւնները տեսնելու համար կարելի է համեմատել նոյն թեմատիկայով գրուած ստեղծագործութիւնները: Միշոյի «Չիմանայիր ինձ» երգը՝ թողարկուած 2011ին, եւ Սիրիուսի «EX» (նախկին սէր) երգը՝ թողարկուած 2021ին, նոյն թեմատիկայի սահմաններում են: Երկուսի հիմքում էլ ընկած են աղջկայ հետ ձախողուած յարաբերութիւնները, սակայն ոճական առումով բաականին տարբեր են:

Միշո. «Չիմանայիր ինձ»

Անելի լաւ ա չիմանայիր ինձ, Որովհետեւ մէկ ա բարդ ա, թէկուզ կեանքդ վարդ ա, թէկուզ մարդդ մարդ ա,
չիմանայիր ինձ, Որովհետեւ չես ջնջի իջքան էլ տաս լոջին, ու դու գիտես՝ արժի, որ չիմանայիր ինձ,
Չիմանայիր անտեղի դիմանայիր ինձ, քո բառերն ա հանած սրտիս տակից Կամ տակից կարեւորը հասկացար ինձ, բամբակից էր սաղ,
Մտքով անցաւ ինձ, մի վախտ սիրողը հիմա դառել ա երգասէր Հիւրասիրողը էտ ես էի բա էլ ո՞վ ա, դէմովդ անցաւ,
Ու միտքը դրանից սկսեց, որ միացա, ու մէկ ա, հիացա, որ քո հետ ա անգինդ, Չգիտեմ՝ հաւայի գյադա ա, թէ դայդին ա, անհամեմատելի ա, չհամեմատես, Բայց որ չիմանա դու՝ հանգիստ թէ կ'ապրես, բայց ապրես:

Որ չիմանայիր ինձ, չէիր համեմատի,
Որ դիմանայիր ինձ, չէիր հիմա ասի,
էտ մտքերից գիշերները քեզ չէիր տանջի ու չիմանայիր՝
Սենց արժի թէ հաստատ չարժի, որ իմանայիր ինձ,
Ոնց որ պէտք ա, կարող ա միանայիր ինձ,
Եթէ պէտք գար յետոյ էլ զարմանայիր իմ ու քո վիզ դրած ուժին,
Որ կողից էլ ասէին, իրանք իրար բուժին մի բաժին,
Ընկածը քոնն ա, էն միսն էլ իմ վզին մնաց,
էտ միա կողմն ա, ու եթէ չիմանայիր ինձ, ու ես չիմանայի քո մասին,
Չէին կռուի իմ մէջ ամբիցիա ու թասիբ,
Որ չիմանայիր ինձ էն վախտ, չէր լինի սենց պարտութիւն ու երախտ, Կարող ա սենց էլ լաւ ա, երեւի համ ինձ, համ քեզ հայալ ա,
Հա լաւ սառուց ու չեմ էլ տաքացած, հա, լաւ, էտ վաղուց էր,
Ու լիքը բան մանկուց էր մէջս, բայց անցաւ, մի քիչ դէմից ցաւում էր,
Հիմա անցաւ, որտեւ կայացաւ լիքը բան իմ կեանքում է,
կեանքը մէջս էնքան բանա ք**է,
Ինչից ծնուել ա անելի շատ բան, թեմաներ շփման,
Կամ անելի շուտ համ մնաց դառը, գործերս խառը,
Մէնակ ռեփն ա քո մօտ լաւ ստացում,

վերջին բառը յիշում եմ,
 Դու ինձ տուել ես յուշեր, որ ինչ-որ մէկը նոյն ձեփ չտուժեր,
 Յետոյ որ մէկը իմանա ինձ, հաստատ կ'դիմանա ինձ,
 Ու եթէ դաժէ մտքովդ անցնի, ինչ իմանայիր,
 Աւելի լաւ ա չիմանայիր, ատելի լաւ ա:

Սիրիոյ. «EX»	
<p>Կրկներգ. Գիտես իմ տեսակը՝ Քո հակառակը, Թէ գնում ես, գնա, Լսել եմ մէնակ ես Չեմ ուզում տենամ քեզ, Գնում ես՝ գնա, Դու լռիւ կրակ ես, Տալիս եմ գազ, Չգուշ՝ չտրաքես, Ըլնի քեզ դաս, Դառել ես գնդակ, Քեզ տալիս են պաս, Կյանքի գոյները Ընկալում ես թարս:</p> <p>Ռէփային հարուած. Լաւ է՝ հելաք-հելաք, Գոնէ ձեր հետ տանէիք Մտքերս-տեքստերս, Խառը՝ ձեր նման էին, Ինչքան էլ EXերս Ինձ վատաբանեն, Ես մնում եմ լուռ, Դժուար մեկնաբանեմ, Սրտիդ մետկա կ'անեմ, Բայց անպէտքական եմ, Կարօտած էս երգի տակ Tik Tok կ'անեն, Հեշտ կապնում են, Դժուար նիստ պահեն, Հետո կարօտում են, Տենց մի կիլո բառեր, Ջերմ սաղիդ բարեւ, Սաղիդ վառ արեւ, Sorry, թէ անիմաստ Չգացմունք եմ վառել, Կյանքս ես եմ վառ</p>	<p>Ափսոս՝ էդ գոյները Անգոյն էք ընկալել... Երէկ կար՝ սօր չկար էլ, Իմ ներկան՝ Ասէք չգան էլ, կ'ժպտամ Ջերս ժպիտս Վկան էր: Օփշի սաղիդ ցաւը տանեմ: Ասում են բարդ ա հետդ, Շուտ ա վերջակէտը, Ես թքած էթամ Ստուդիա, կարդամ ռէփը, Գիտեմ ուշադրութիւն, Ոչ թէ վարդ ա պէտք, Սրտումս ինչ կա՝ Վաղուց դատարկել եմ, Չեմ հանդարտուել է կատակել եմ, Թո ըլնեմ անառողջ, Ուժեղ փաթաթել եմ, Հայելուն նայելուց չտենամ Սթափուել եմ, Ուզում եմ՝ խփեմ գոլ, Թո ինձ պաս տա Պելէն, Ես հիասթափուել եմ, Ինձ մի ասա տէր եմ, Ճանաչում եմ վաղուց՝ Ժամկէտն անց ստեր են Ինչքանով ջոգէ, Էտքանով բացատրել եմ Սաղ չորը թողէ գնացէ, Թացն ընտրել եմ, Ինքս ինձ կորցրել, Հազիւ գտել եմ Սեփական եսից շատ, Հաւայի կտեր են, Նենց չի՝ բողբոջում եմ, Ուզեցէ, ընտրել եմ Էս սաղ կյանք՝</p>

Գուներով նկարել,	Հաւաքած սաղից, Զգուած մտքեր են:
------------------	------------------------------------

Այս երկու երգերի լեզուն, մասնատրապէս՝ բառերը ուսումնասիրելով, կարելի է տեսնել հայկական ռէփի վերոնշեալ բնութագրումները:

Առաջին երեսոյթը, որ նկատուած է՝ ռէփի շեղալեզու լինելն է. Միշօն իր տողերից մէկում հեշտօրէն կարող էր ասել «*իՆՉքան էլ տաս լրջին*», բայց նախընտրուած է կարդալ փողոցի շեղալեզուով՝ ասելով՝ «*իՇՔան էլ տաս լրջին*»:

Սիրիուսն էլ կարող էր «*Թքած, էԹԱՄ սիրուդիա*» արտայայտութեան փոխարէն ասել՝ «*Թքած, ԳՆԱՄ սիրուդիա*»:

Միշոյի գրոյթում կարող ենք նաեւ հայիոյանք տեսնել, որը շատերի համար սուր քննադատութեան առիթ է, իսկ շատերի համար էլ զգացմունքի անելի վառ արտայայտման ձեւ: Շեղալեզու հասարակաբան առանձնայատկութիւնը առաջին երեսոյթն է, որը խանգարում է ռէփը համարել բարձր արուեստ՝ ոճային աստիճանով խօսքային միւս ժանրերին հաւասար:

Երգերի բառերն ուսումնասիրելիս կարող ենք հանդիպել նաեւ յանգի համար միտքը, ասելիքը զոհաբերելու երեսոյթին. «*Փաթաթել եմ*», «*Սթափուել եմ*», «*Հիասթափուել եմ*» արտայայտութիւնների հետ յանգ ստեղծելու համար Սիրիուսը ռէփի մեջ յիշում է ֆուտբոլի արքային, եւ ստացում է հետեւեալը՝ «*Թո ըլնեմ անառողջ, Ուժեղ փաթաթել եմ, /Հայելուն նայելուց չտենամ՝ Սթափուել եմ, /Ուզում եմ խփեմ գոլ, Թո ինձ պաս տա Պելէն, /Ես հիասթափուել եմ*»...

Ահա, թէ ինչ է ստացում, երբ իմաստը գնում է այնտեղ ուր տանում է յանգը: Ոմանց համար սա սրամտութիւն է կամ բարի մեծամտութիւն, բայց ուրիշներ կարծում են, որ ռէփը չի կարողացել յանգը եւ իմաստը համապատասխանեցնել:

Իսկ որտե՞ղ է մարիխուանայի եւ թմրամոլութեան քարոզը, որը բացակայում է 12 տարի առաջուայ հայկական ռէփից եւ ահագնացող է նորօրեայ ռէփում, յատկապէս Վնասակարի գրոյթներում, եւ թեթեւ նկատելի է Սիրիուսի որոշ երգերի մէջ: «*Թող ըլնեմ անառողջ, ուժեղ փաթաթել եմ*»: Ի՞նչ է փաթաթել ռէփը, որի պատճառով պէտք է «անառողջ» լինի: Սա հենց մարիխուանայի կենցաղային քարոզն է: Քանի որ ռէփի եւ փողոցային կեանքի լեզուն հասկացողների համար միանգամայն պարզ է, թէ ինչ է փաթաթել ռէփը:

Արդէն ասուեց, որ այն արուեստագէտները, որոնք հայկական ռէփի հիմքն են դրել, մինչեւ հիմա էլ երգեր են թողարկում: Նրանք՝ Միշօն, Ֆելօն, Աչիլլան, միատրուած են «Մի քանի հոգի» խմբում: Այս խմբի երգերը ոճական անելի բարձր դիրք ունեն, փիլիսոփայական են եւ անելի եթերային, քան ժամանակակից միւս արուեստագէտների երգերը: «Մի քանի հոգի»-ն տարբերում-առանձնանում է՝ շնորհիւ երգիչ Ռոլանդ Գասպարեանի մեղեդային

հատուածների, Միշոյի փիլիսոփայական եւ քննադատական սուր մտքերի, Ֆելոյի գրոյթների բանաստեղծական եւ բառախաղային յագեցուածութեան, Աչիլլայի հետաքրքիր պատկերատրումների եւ Սերժոյի ստեղծած ականջահաճոյ պիթերի:

«Մի քանի հոգի»ն աւելի շատ մատուցում է սիրային եւ փիլիսոփայական երգեր: Նրանց երգացանկից գրեթէ բացակայում են կենցաղային, առօրեայի մասին պատմող երգերը:



ՌԷՓԻ ԱՊԱԳԱՆ

Ռէփի հմնադրումից, զարգացումից եւ այժմեան շրջանից խօսելով կարող ենք հարցադրել՝ ի՞նչն է պակասում հայկական ռէփին, ո՞ր ուղղութեամբ այն դեռ զարգանալու տեղ ունի, ինչպէ՞ս են տրամադրուած նոր ստեղծագործող, եւ առայժմ յայտնիութիւն չունեցող ռէփըրները, ի՞նչը կարող է այս ոլորտում յեղափոխական լինել, այսինքն մի մակարդակ եւս բարձրացնել հայկական ռէփը:

Drill, Underground ոճերն այժմ ազատ են, որովհետեւ շատ քիչ են արտիստները, որոնք մէկ որոշակի ուղղութեամբ են ստեղծագործում: 2010ականների սկզբին Underground ոճում առաջատար էր Սենչօն: Նրանից յետոյ «Վնասակար»ը սկսեց ստեղծագործել այդ ոճով, սակայն Undergroundը, եթէ համեմատենք այլ ժանրերի հետ, այսօր այնքան էլ շատ չի լսում, իսկ խնդիրը, իհարկէ, նաեւ այդ ժանրում արտիստների պակասն է: Drill ոճում ստեղծագործող եւ այդ ոճը մեծմասամբ իր անուան հետ կապող արտիստ եւս չկայ, եւ եթէ Undergroundում Սենչօն եւ որոշ չափող «Վնասակար»ը ստեղծել են երգեր, որ կարող են մինչ այսօր լսուել, ապա

Drill ոճը կարող է ազատ դաշտ համարուել նոր արտիստների համար: Կան ժանրեր, որոնք, լինելով արտասահմանեան եւ յատկապէս ամերիկեան ունեւորում, արտայայտուած չեն հայկական ունեւորում, օրինակ՝ Ռեգի, Ջազ, Ֆանկ, Դիսկօ եւն.: Այս ժանրերը հիանալի հարթութիւններ են նորը ստեղծելու եւ ունեւորում յեղափոխական նոր խօսք ասելու համար:

Ռէփը երգարուեստի այլ ժանրերի չափ զանգուածայնացնելու ճանապարհներից մէկը գետնօններից դուրս բերելն է: Եթէ այն ամէլի բանաստեղծական լինի, յատկապէս բառապաշարի, արտայայտչամիջոցների եւ իմաստային առումով, ամէլի մեծ զանգուածայնութիւն կը վայելի եւ ինչու ոչ, կը համարուի երգարուեստի ճիւղ, որը արժէքային որակներով չի զիջի միւս ճիւղերին: Այս ուղղութեամբ լաւ նախադէպ են Ֆելոյի՝ «3.33»-ի եւ «Մի քանի հոգի»-ի երգերը, դրանք առանձնանում են իրենց պոետականութեամբ:

Ռէփում այսօր նոր ստեղծագործողների պակաս չկայ, բայց եւ կարիք կայ նոր խօսքի:

Կան արուեստագէտներ, որոնք ուղորտում նոր լինելու պատճառով ունեն ամէլի քիչ լսարան, սակայն զարգացում են ապրում եւ նոր երգեր ու ալբոմներ թողարկում, ու մենք կարող ենք նաեւ նրանց պատկերացնել, երբ խօսում ենք ունեւորի ապագայի մասին: Այդ արուեստագէտներն են **47**ը, Դանակը, Դաւ Համբարձումեանը, **Չօն**, Էնոմենալը եւ այլք:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այսօր ոմանք կարծում են որ, ունեւոր Հայաստանում զարգացած չէ, բայց մեր երկրի չափերի համեմատ՝ ունեւոր զարգացումը, կարելի է ասել, այնքան է, որքան երբեք չի եղել իր ստեղծման օրից, քանի որ, բացի շատ դիտումներից, նաեւ ունեւոր զբաղողների թիւն է շատացել: Բայց քանակն այս արուեստում դեռ որակի գրաւական չէ, թէեւ այժմ մարդկային արժէքների պաշտպանութեամբ եւ դաստիարակչական ու փիլիսոփայական ասելիքով ներկայացող ունեւորները ամէլի քիչ լսարան ունեն, քան առօրեական ու կենցաղային թեմաներով, յաճախ նոյնիսկ անճաշակ ներկայացողները: Այսօրուայ երիտասարդութիւնը կարծես թէ ամէլի շատ կարեւորում է պիթը, տեմպը, տրամադրութիւնը, քան ասելիքն ու իմաստը: Այս պատճառով էլ ստեղծում է թիւր կարծիք, թէ հայկական ունեւոր չկայ:

Իսկ իրականում կա՛յ ստեղծագործողին գտնելու ու ճանաչելու խնդիր: Երբ ոմն ասում է, որ հայկական ունեւոր անիմաստ է, դատարկ է ու զուտ կենցաղային, նրան պէտք է ուղղորդել, որպէսզի նա լսի այն ունեւորների երգերը, որոնք կարող են միքանի անգամ փոքրաթիւ լսարան ունենալ, բայց իմաստային եւ այլ որակներով գերազանցել մեծ լսարան ունեցող ունեւորներին: Իսկ արտասահմանեան ունեւորների հետ համեմատելով՝ կարող ենք տեսնել, որ Հայաստանում ունեւոր բաւական իմաստալից է, եւ յաճախ միայն արտասահմանեան ունեւորների անուններն են, որ մարդկանց ստիպում են կարծել, թէ օտար ունեւոր համեմատ հայկական ունեւոր ամէլի թոյլ զարգացած

է: Ինչպէս ասում է ռէփի հիմնադիր Միշոն՝ այսօր շատ սխալ կարծրատիպեր կան հայկական ռէփի մասին, քանի որ շատերը միայն հեռուից են տեսնում հայկական ռէփը:

Ատորեւ հայկական չէփի միքանի երգիուպեան հասցէներ³:

³ Առաջին հայկական պաշտօնական ռէպ՝ «Հայ տղեն տղա ա» <https://youtu.be/56Un0ILZ2CU?si=qjWWGVvQ2lxmo9Gk> , Հայ տղեքի երգերից՝ խօսք երիտասարդութեանը («Հայ ճժեր», <https://youtu.be/9MTElffAoo?si=r3zu9qSqW2FosEWv> , տեսահոլովակով առաջին ռէփը՝ «Հարազատ քուչա», <https://youtu.be/0fppCnjl3A?si=sukplv8-ExvV3rQd> , Հայք խմբից, «Քամի փչի»՝ https://youtu.be/BBVormp60N0?si=vcTy69Rb198LAu_ , «Մի պատմութիւն»՝ https://youtu.be/eeP19riu0r4?si=54awidk20vyhR_pT , Red Light խմբից «Մութ փողոցներ»՝ https://youtu.be/H1Dvj_SH470?si=NtiHS1RmKRqTgtmw , Սենչոյից «Անձրեւ»՝ https://youtu.be/OZXkVICTZj8?si=uS_fQvW-9PYgTOtl , Մեծ Հայք խմբից՝ «Մեզ մի նախանձի»՝ <https://youtu.be/5F22b8lw9dA?si=Eq3A3lo-FMRSwUq-> , Էդգարից՝ «Ասա դերասան»՝ https://youtu.be/ZWAgh0NiUGY?si=0_r6DuGe3itgl86Z , Մօսից՝ «Արեւը կը բացուի»՝ <https://youtu.be/tFht-ZUtX9o?si=Sv9i71DKmLr2iZP> , Էմիլիօ եւ Էդգարի ժամանակի հիթ դարձած ռէպերից՝ «Վայրենի»՝ <https://youtu.be/n8xDgIHf-2w?si=9dfBbKsKgkdAZqE1> , Էմիլիոյից՝ «Դորիան», <https://youtu.be/B5fv8UawGRs?si=BIRxQkQ0-I6ud7xh> , Վնասակարից՝ «Չեմ ուզում ասեմ», https://youtu.be/OSH9XTgF5fU?si=867oq_2e5i3YDXIK , Վնասակար եւ Պոնչից՝ «Վազում եմ»՝ https://youtu.be/DcSPVh-v_24?si=868ZRL7QFibtw0Bz , Սիրիուսից՝ «Ինչ ա պատահել 2»՝ <https://youtu.be/E22ag1nVNwE?si=YqBZI7Y1Nyhq8HOu> , «Տաքսի»՝ https://youtu.be/7oyFT1gSy-w?si=e2Jl_V8j5NpiyaV3 , Վնաս՝ «Չկայ գարուն», <https://youtu.be/5MjB1aa9yvQ?si=GFCOougsW30h1yKJ> , «Իմ ընդերը», https://youtu.be/1l0t7Y-yRNo?si=GzUYXqfes01BCw_6 , ՀՏ Հայկո՝ «Ես յոզնել եմ», <https://youtu.be/cCsk1no5cJQ?si=nfZGWZxqDVWlatz7> , «Անցած էտապ», <https://youtu.be/RfIOZvaWWOM?si=vjmeWkIw7Sbom0AG> , Հտ Հայկո եւ Շիրազ «Փչացած սէր» (դաստիարակչական, ռէփ պատմութիւն)՝ <https://youtu.be/HwG573qkimE?si=p99MzKXkqk8rwx5> , Միշո՝ «Եթէ իրար լսենք»՝ <https://youtu.be/V84lycATdvA?si=u6lcQoeu0ve2am-V> , «Չիմանայիր»՝ <https://youtu.be/BdgLOeDH1x0?si=CX8AnDfjou19dN6l> , «Ով ենք»՝ https://youtu.be/vWspYKbKz-I?si=Q96j1V1hsg_wmhtN :

ARMENIAN RAP
(Summary)

MUSHEGH TONOYAN
mushotonoyan0440@gmail.com

The paper is a path-breaking study on Armenian rap. It narrates the birth and the development of Armenian rap, from its inception in the early 2000s. The study focuses on the different Armenian groups that emerged in Armenia as well as the different albums they produced and dwells on their texts, their content and the messages they carry. The study examines the shifts in the wording, expressions, and language used in the texts within the two decades of the existence of Armenian rap, how it was accepted by the public and the reaction of the young generation.

The paper affirms the existence of Armenian rap and raises some questions on its prospects and the directions it may take.